



NATO  
|  
OTAN

Հ Ո Ւ Շ Ա Գ Ի Ր

2007թ. ՍԵՊՏԵՄԲԵՐ

# Գործընկերներ Հարավային Կովկասում

ՆԱՏՕ-ն խորացնում է համագործակցությունը Հարավային Կովկասում իր գործընկեր երկրների՝ Հայաստանի, Ադրբեջանի և Վրաստանի հետ: Մա արտացոլում է Դաշինքի անդամ պետությունների ղեկավարների կողմից 2004 թ. հունիսին Ստամբուլի գագաթնաժողովում ընդունված այն որոշման, որի համաձայն Կովկասյան տարածաշրջանի, ինչպես նաև Կենտրոնական Ասիայի երկրների հետ գործընկերություն հաստատումը դասվեց Դաշինքի առաջնահերթությունների ցանկում: Այն ՆԱՏՕ-ի քաղաքականության մասն է՝ աջակցել ռազմավարական կարևորություն ունեցող տարածաշրջաններին, որոնց անվտանգությունը և կայունությունը սերտորեն կապված են ավելի ընդարձակ եվրո-ատլանտյան անվտանգության հետ:

ՆԱՏՕ-ի Գործընկերության կառույցները Հարավային Կովկասի երկրներին տալիս են բազմակողմ ձեռնարկ, որի միջոցով նրանք կարող են դիմակայել անվտանգության սպառնալիքներին: Գործընկերությունը նրանց նաև հնարավորություն է տալիս օգտագործել Դաշինքի փորձն ալդպիսի սպառնալիքներին դիմակայելու նպատակով իրենց պաշտպանական ինստիտուտներն ու ունակությունները հարմարացնելու ոլորտում, ինչպես նաև ստանալ դաշնակից երկրների աջակցությունն ավելի ընդարձակ բարեփոխումներ իրականացնելու համար:

Վերջին մի քանի տարիների ընթացքում երեք երկրներից յուրաքանչյուրը մշակեց մշակել է ՆԱՏՕ-ի հետ Անհատական Գործընկերության Գործողության Ծրագրեր՝ բարձրացնելով համագործակցության մակարդակը և կենտրոնացնելով ուշադրությունը բարեփոխումների իրենց առաջնահերթությունների վրա (տես՝ 2-րդ էջի պունակը): Բացի դրանից 2006թ. սեպտեմբերին ՆԱՏՕ-ն Վրաստանի հետ Բնտենսիվ Երկխոսություն սկսեց, որը ներառում է այդ երկրի անդամակցության ձգտումներին վերաբերող քաղաքական, ռազմական, ֆինանսական և անվտանգության հարցերի ողջ շարքը (տես՝ 3-րդ էջի պունակը): Չնայած դա չի երաշխավորում, որ Վրաստանը կիրավիրվի անդամակցելու դաշինքին, սակայն դա ՆԱՏՕ-ի հետ այդ երկրի հարաբերությունների սահմանների և խորության չափորոշիչ է:

Այս զարգացումները շարունակում են ՆԱՏՕ-ի և հարավկովկասյան երեք երկրների միջև անընդհատ զարգացող համագործակցության պատմությունը, որին սկիզբ դրվեց 1990-ականների սկզբին: Հայաստանը, Ադրբեջանը և Վրաստանը Հյուսիս-Ատլանտյան Համագործակցության Խորհրդի առաջին մասնակիցներից էին. 1991թ. դեկտեմբերին դաշինքի կողմից ստեղծվեց այդ երկխոսություն կառույցը, որը Վարշավյան պակտի անդամ երկրներին Արևելք-Արևմուտք բաժանարար գծի վրայով ձեռք մեկնելու առաջին փորձն էր: Չետագայում՝ 1997 թ.-ին այն փոխարինվեց Եվրա-Ատլանտյան Գործընկերության Խորհուրդով: Երեք երկրներն արագորեն օգտագործեցին նաև Գործընկերություն Հանուն Խաղաղության ծրագրին անդամակցելու արդյունքում ընձեռնվող հնարավորությունները, որը 1994թ.-ին գործադրված գործնական երկկողմ համագործակցության խոշոր ծրագիր է:

## ԲՈՎԱՆԱԿՈՒԹՅՈՒՆ

- Տարածաշրջանում անվտանգությունը զարգացնելու կարևորությունը..... 2
- Համագործակցության շրջանակները..... 3
- Համագործակցության առանցքային ոլորտները..... 4
- Փուլանշեր..... 8

## ՆԱՏՕ-Ի ՀՍՏՈՒԿ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉԸ ԿՈՎԿԱՍՈՒՄ և ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԱՍԻԱՅՈՒՄ

2004թ. հունիսին տեղի ունեցած Ստամբուլի գագաթնաժողովում դաշնակից երկրները որոշեցին նշանակել Կովկասում և Կենտրոնական Ասիայում ՆԱՏՕ-ի հասուն կերկայացուցիչ: Առաջինն այդ պատասխատվությունը ստանձնեց Ռոբերտ Միմնադը: Նրա խնդիրն է տարածաշրջանի պետությունների ղեկավարների հետ պահպանել բարձր մակարդակի աշխատանքային հարաբերություններ՝ տարածաշրջանային անվտանգությանը և գործընկեր երկրների կողմից Գործընկերության գործիքների լավագույն կիրառելուն նպաստելու նպատակով:

Նա սերտորեն համագործակցում է տարածաշրջանային պաշտոնյաների, ինչպես նաև այլ կարևոր կազմակերպությունների իր գործընկերների հետ, ինչպիսիք են Եվրոպական Միությունը և Եվրոպայում Անվտանգության և Համագործակցության Կազմակերպությունը: Մա օգնում է երաշխավորելու հաղորդակցման շարունակականությունը և աշխատանքի իրականացումը փոխյարացման սկզբունքով:

Կովկասում և Կենտրոնական Ասիայում նրա աշխատանքին աջակցում են երկու կայի սպաները՝ մեկական յուրաքանչյուր տարածաշրջանում: Յուրաքանչյուր կայի սպա խորհրդակցական կարգով ուղղակիորեն աշխատում է համապատասխան պետական իշխանությունների հետ՝ ՆԱՏՕ-ի հետ նրանց գործընկերության ծրագրում նշված բարեփոխումներ վերաբերյալ նպատակների հասնելու համար:



Վրաստանում: ՆԱՏՕ-ն չի ցանկանում ուղղակի դերակատարություն ունենալ այս հակամարտությունների լուծման հարցում, բայց սատարում է այնպիսի միջազգային կազմակերպությունների ջանքերին, ինչպիսիք են Եվրոպայում Անվտանգության և Համագործակցության Կազմակերպությունը և Միացյալ Ազգերի Կազմակերպությունը, որոնք ունեն միջնորդի հատուկ մանդատ: Հակամարտությունների խաղաղ կարգավորումը ՆԱՏՕ-ի համար հիմնարար արժեք է, և այս պետություններին ՆԱՏՕ-ի աջակցությունը կախված է հակամարտությունները խաղաղ կարգավորելու նրանց շարունակական ջանքերից: Իրականում, սա գտնվում է այն պարտավորությունների հիմքում, որոնք Հարավային Գոլկասում ՆԱՏՕ-ի գործընկերները ստանձնել են Գործընկերություն հանուն Խաղաղության ծրագրին միանալիս:

## Համագործակցության շրջանակները

Գործընկերությունն ավելին է, քան գործնական համագործակցությունը, այն վերաբերում է նաև արժեքներին: Երբ Գործընկեր երկրները միանում են Գործընկերություն հանուն Խաղաղության (ԳհԽ) ծրագրին, նրանք ստորագրում են ԳհԽ Շրջանակային փաստաթուղթը: Դրանով իսկ Գործընկերները պարտավորվում են հարգել միջազգային իրավունքը, ՄԱԿ-ի կանոնադրությունը, Մարդու իրավունքների համաշխարհային հռչակագիրը, Հելսինկիի Եզրափակիչ ակտը և զինաթափման ու զենքերի վերահսկողության միջազգային պայմանագրերը, ձեռնպահ ժամալ պլետությունների նկատմամբ ուժի, կամ ուժի սպառնալիքի կիրառումից, հարգել առկա սահմանները և վեճերը կարգավորել խաղաղ ճանապարհով: Շրջանակային փաստաթուղթը պարունակում է նաև դաշնակիցների պարտավորությունը խորհրդակցելու յուրաքանչյուր Գործընկեր երկրի հետ, որը կարծում է, որ առկա են սպառնալիքներ իր տարածքային ամբողջականության, քաղաքական անկախության կամ անվտանգության նկատմամբ: Այս պարտավորությունների և ԳհԽ ծրագրի ընդհանուր նպատակը վստահություն և թափանցիկության ստեղծումն է, խաղաղության սպառնալիքների նվազեցումը և Դաշնակից ու այլ Գործընկեր երկրների հետ անվտանգության ավելի ամուր հարաբերություններ կառուցելն է:

ԳհԽ ծրագրի էությունը ՆԱՏՕ-ի և յուրաքանչյուր Գործընկեր երկրի միջև ձևավորված գործընկերությունն է: Համագործակցությունը կառուցվում է յուրաքանչյուր պետության կարիքների, ունակությունների և ցանկությունների համաձայն և համատեղ իրականացվում է այդ երկրի կառավարության հետ: Գործընկերները միջացողունների լայն շրջանակից ընտրություն են կատարում համագործակցության երկամյա ծրագիր ձևավորելու նպատակով, որը հայտնի է Անհատական Գործընկերության Օրագիր անունով: Առաջարկվող միջոցառումները ներառում են ՆԱՏՕ-ի գործունեության փաստացիորեն բոլոր ոլորտները, ներառյալ պաշտպանության առնչվող աշխատանքները, պաշտպանական բարեփոխումները, պաշտպանական քաղաքականությունն ու պլանավորումը, քաղաքացիական-ռազմական փոխհարաբերությունները, կրթությունն ու ուսուցումը, ռազմական համագործակցությունն ու զորավարությունները, արտակարգ իրավիճակների պլանավորումն ու աղետների արձագանքումը, ինչպես նաև համագործակցությունը գիտական ու բնապահպանական ոլորտներում:

Տարիների ընթացքում Հայաստանը, Ադրբեջանն ու Վրաստանը որոշել են շատ ակտիվ լինել ԳհԽ ծրագրի շրջանակներում ընդգրկված մի շարք ոլորտներում: Նրանք առաջին Գործընկեր երկրներից էին, որոնք հետաքրքրություն ցուցաբերեցին Անհատական Գործընկերության Գործողությունների Օրագրի նկատմամբ, երբ այն գործարկվեց 2002 թ. (տես՝ 2-րդ էջի սյունակը):

Բացի երկկողմ համագործակցությունից, Գործընկերության ձեռնարկն ունի կարևոր բազմակողմ ուղղվածություն: Դա արտահայտված է Եվրա-Ատլանտյան Գործընկերության Խորհրդում (ԵԱԳԽ), որը 26 Դաշնակից և 23 Գործընկեր երկրների համար երկխոսության և խորհրդակցության հարթակ է: ԵԱԳԽ-ի նիստերը տեղի են ունենում ամեն ամիս դեսպանների մակարդակով, ամեն տարի՝ արտաքին գործերի և պաշտպանության

**2**006թ. սեպտեմբերին ՆԱՏՕ-ն Վրաստանին առաջարկեց առավել ինտենսիվ երկխոսություն, որը ներառում է այդ պետության անդամակցության ձգտումների քաղաքական, ռազմական, ֆինանսական և անվտանգությանը վերաբերող խնդիրների ողջ շարքը:

Սա չի երաշխավորում Դաշինքին անդամակցելու հրավերը: Ցանկացած հրավեր հիմնվում է ընթացիկ գործունեության վրա և կախված է պետության կողմից կարևորագույն բարեփոխումների իրականացումից և մի շարք արդյունքների ձեռքբերումից: Դրանց թվում են շուկայական տնտեսության վրա հիմնված գործող ժողովրդավարական քաղաքական համակարգը, ազգային փոքրամասնությունների նկատմամբ արդար վերաբերմունքը, հավատարմությունը վեճերի խաղաղ կարգավորմանը, Դաշինքին ռազմական մասնակցություն ցուցաբերելու ունակությունն ու ցանկությունը և այլ անդամների զինված ուժերի հետ փոխգործակցության ունակություն ձեռք բերելը, ինչպես նաև նվիրվածությունը քաղաքացիական-ռազմական ժողովրդավարական հարաբերություններին և ինստիտուցիոնալ կառույցներին:

Փորձագետների կառուցվածքային քննարկումների միջոցով Ինտենսիվ Երկխոսությունը Վրաստանին տրամադրում է կոնկրետ տեղեկատվություն ՆԱՏՕ-ին անդամակցելու համար անհրաժեշտ իրավունքների ու պարտավորությունների վերաբերյալ: Այն նաև ՆԱՏՕ-ի պաշտոնյաներին հնարավորություն է տալիս ավելի մանրամասն ուսումնասիրել Վրաստանի բարեփոխումների քաղաքականությունը և ունակությունները: Դա օգնում է բացահայտել այն հիմնական ոլորտները, որոնց վրա Վրաստանը պետք է կենտրոնացնի իր ջանքերը բարեփոխումներ իրականացնելիս: Ինտենսիվ երկխոսությունը հավելում է Վրաստանի Անհատական Գործընկերության Գործողության Օրագրով իրականացվող աշխատանքներին, որը մտում է բարեփոխումների վերաբերյալ համագործակցության հիմնական ծրագիրը:





Անցակետերում մեքենաների ստուգում իրականացնելը՝ KFOR-ում հայկական ստարաբաժանման պարտականություններից մեկն է:

նախարարների մակարդակով, ժամանակ առ ժամանակ տեղի են ունենում նաև գազաթնաժողովներ:

ԵԱԳԽ անդամները պարբերաբար տեսակետներ են փոխանակում անվտանգության խնդիրների լայն շրջանակի վերաբերյալ, ներառյալ Կոստովոյում և Աֆղանստանում զարգացող անվտանգության իրավիճակը, որտեղ համատեղ տեղակայված են Դաշնակից և Գործընկեր երկրների խաղաղապահները: ԵԱԳԽ-ն նաև հանդես է եկել մի շարք նախաձեռնություններով, որոնք վերաբերում են գործնական համագործակցությանն ու փորձի փոխանակմանն այնպիսի ոլորտներում, ինչպիսիք են ահաբեկչության դեմ պայքարը, սահմանների անվտանգությունը և զանգվածային ոչնչացման զենքերի և հրազենի ու թեթև զենքերի տարածման դեմ պայքարի հետ կապված այլ հարցերը: Տարիների ընթացքում ԵԱԳԽ-ն կազմակերպել է նաև Հարավային Կովկասում տարածաշրջանային համագործակցությունը խթանող գործնական մոտեցումների վերաբերյալ զանազան սեմինարներ և աշխատանքային քննարկումներ:

Խորհրդակցությանն ու համագործակցությանը նպաստելու նպատակով Հայաստանը, Ադրբեյջանն ու Վրաստանը մշտական դիվանագիտական ներկայացուցչություններ են հաստատել Բելգիայի Բրյուսել քաղաքում՝ ՆԱՏՕ-ի կենտրոնակայանում: Նրանք նաև ներկայացված են Բելգիայի Մոնս քաղաքում տեղակայված Եվրոպայում Դաշնակցային Ուժերի Գերագույն Հրամանատարությունում՝ SHAPE՝ գործող Գործընկերության Համակարգման Խմբում, ինչը նպաստում է նրանց մասնակցությունը ուսուցումներին և գործավարություններին: Որպես ՆԱՏՕ-ի կողմից ղեկավարվող խաղաղապահ առաքելություններին մասնակցող երկրներ, նրանք նաև հնարավորություն ունեն մասնակցել SHAPE-ում գործող Միջազգային Համակարգման Կենտրոնի քննարկումների և պլանավորման գործողություններին:

### Համագործակցության հիմնական ոլորտները

Առաջին փուլում գործընկերությունն ու համագործակցությունն ՆԱՏՕ-ի և Հարավային Կովկասում իր Գործընկերների միջև կենտրոնանում էր թափանցիկությունը խթանելու և վստահություն ստեղծելուն ուղղված միջոցառումների վրա: Տարիների ընթացքում համագործակցությունը ընդլայնվեց և խորացավ: Այսօր հիմնական առաջնահերթություններն են՝ Դաշնակից և այլ Գործընկեր երկրների ուժերի հետ համատեղ խաղաղապահ գործողություններում Կովկասի երկրների զինված ուժերի աշխատելու ունակությունների բարելավումը, խորհրդատվություն ու աջակցություն պաշտպանական և անվտանգության ոլորտի բարեփոխումների իրականացմանը՝ հարմարեցված յուրաքանչյուր երկրի առանձնահատուկ կարիքներին, գործնական համագործակցություն՝ անվտանգության ընդհանուր մարտահրավերներին դիմակայելու նպատակով: Համագործակցության մյուս կարևոր ոլորտներն են աղետներին արձագանքելու կարողությունը, գիտությունը և բնապահպանությունը, ինչպես նաև հանրային տեղեկատվությունը:

### Համագործակցությունն անվտանգության ոլորտում

Հայաստանի, Ադրբեյջանի և Վրաստանի հետ ՆԱՏՕ-ի համագործակցության ընթացքում էական ուշադրություն է հատկացվում ՆԱՏՕ-ի կողմից ղեկավարվող խաղաղապահ և ճգնաժամերի կառավարման գործողություններին այդ երկրների կողմից տրվող աջակցության ունակությունների բարելավմանը: Երկկողմ ծրագրերը և բազմազգ վարժանքներն օգնում են զարգացնել այդ երկրների ուժերի ՆԱՏՕ-ի ուժերի հետ համատեղ գործելու հնարավորությունները: Չափազանց կարևոր են ընդհանուր լեզվով խոսել սովորելը և փոխգործակցության զարգացումը ստանդարտ ընթացակարգերի առումով:

Գին շրջանակներում ունեցած այդպիսի նախապատրաստության շնորհիվ բոլոր երեք Գործընկեր երկրների ուժերը ներկայումս աջակցում են ՆԱՏՕ-ի կողմից ղեկավարվող խաղաղապահ առաքելություններին: Հայաստանը 2004 թ.-ից մասնակցում է Կոստովոյում



ISAF-ի ադրբեջանցի զինվորը շփվում է տեղի աֆղանցի երեխաների հետ Քաբուլի անցակետերից մեկի մոտակայքում:



ISAF-ի վրացի զինվորը զննում է տեղանքը:

խաղաղապահ ուժերին (KFOR) հունական ուժերի կազմում և ներկայումս դիտարկում է Աֆղանստանում ՆԱՏՕ-ի կողմից ղեկավարվող Միջազգային Անվտանգության Աջակցության Ուժերին (ISAF) իր մասնակցության հարցը: Մեկական դասակի չափով ադրբեջանական զորակազմերը ծառայում են թուրքական ուժերի կազմում KFOR-ում՝ 1999թ.-ից եւ ISAF-ում՝ 2002թ.-ից: 2007թ.-ին կրկնապատկվել է Աֆղանստանում ադրբեջանական զորակազմի քանակը: Վրաստանը KFOR-ին իր աջակցությունն է ցուցաբերել 1999թ.-ից ի վեր, և ներկայումս վրացական մեկ վաշտ շարունակում է ծառայել այնտեղ գերմանական բրիգադի կազմում, իսկ դասակի չափով մեկ այլ ստորաբաժանում ծառայում է թուրքական ուժերի կազմում: Վրաստանը նաև կարևոր աջակցություն է ցուցաբերել ISAF-ին 2005թ.-ին ՆԱՏՕ-ի հետ կնքած պայմանագրի շրջանակներում թույլատրելով իր տարածքով բեռներ տեղափոխել: Այն տրամադրել է նաև մեկ դասակ, որը 2004թ.-ին բրիտանական գումարտակի հետ համատեղ օգնել է պահպանել անվտանգությունը Աֆղանստանի նախագահական ընտրությունների ընթացքում: Ներկայումս ավարտվում են ISAF-ին հետագա աջակցություն ցուցաբերելու քննարկումները, որոնք վերաբերում են բժշկական և հատուկ ուժեր տրամադրելուն:

Հարավկովկասյան Գործընկերները մասնակցում են նաև ահաբեկչության դեմ պայքարին՝ Ահաբեկչության դեմ Գործընկերության Գործողության Ծրագրին մասնակցության միջոցով, որը գործարկվել էր 2001թ. սեպտեմբերին Միացյալ Նահանգների վրա իրականացված ահաբեկչական հարձակումից անմիջապես հետո: Համագործակցությունն այս ոլորտում ներառում է հետախուզական տվյալների փոխանակություն, ինչպես նաև ուսուցումներն ու վարժանքներ՝ հակաահաբեկչական ունակությունները և սահմանների անվտանգությունը, ինչպես նաև հավանական ահաբեկչական հարձակման հետևանքները վերացնելու պատրաստվածությունը բարելավելու նպատակով:

### Պաշտպանական և անվտանգության ոլորտների բարեփոխումներ

Պաշտպանական և անվտանգության ոլորտի բարեփոխումները հարավկովկասյան երկրների հետ համագործակցության աճող կարևորություն ունեցող ոլորտ է և հանդիսանում է ՆԱՏՕ-ի հետ համաձայնեցված ԱԳԳԾ-ների հիմքը: Դա մի ոլորտ է, որտեղ ՆԱՏՕ-ն և առանձին Դաշնակից երկրներ զգալի փորձ ունեն, որը կարող են օգտագործել Գործընկեր երկրները: Հիմնական առաջնահերթություններն են. եվրաստրատեգիայի տարածաշրջանում ճգնաժամերի կարգավորմանը և խաղաղապահ առաքելություններին մասնակցելու նրանց ունակությունների զարգացումը, աջակցությունը պետական պաշտպանական ինստիտուտների արդյունավետ կառավարմանը, զինված ուժերի քաղաքացիական և ժողովրդավարական վերահսկողության խթանումը:

ԱԳԳԾ-ները ամրացնում են քաղաքական երկխոսությունը և ժողովրդավարական, ինստիտուցիոնալ և պաշտպանական բարեփոխումները դարձնում են ՆԱՏՕ-ի հետ համագործակցության հիմնական թիրախը: Մասնավորապես, ինստիտուցիոնալ բարեփոխումների խթանումն օգնում է պաշտպանական և անվտանգության ոլորտի բարեփոխումներին, ինչպես նաև նպաստում է անցմանը դեպի ժողովրդավարություն:

Պաշտպանական ոլորտի ավելի որոշակի և տեխնիկական բարեփոխումները քննարկվում են ԳհԽ Պլանավորման և վերլուծության գործընթացի (PARP) համատեքստում: Դա օգնում է բացահայտել, զարգացնել և գնահատել այն ուժերն ու ունակությունները, որոնք կարող են մասնակից լինել ՆԱՏՕ-ի բազմազգ ուսուցումներին, վարժանքներին և գործողություններին: Այն Գործընկերներին նաև հնարավորություն է տալիս ստեղծել արդյունավետ, ոչ ծախսատար և կայուն զինված ուժեր, ինչպես նաև նպաստել ավելի լայն պաշտպանական բարեփոխումների իրականացմանը: Բոլոր երեք հարավկովկասյան երկրները որոշել են մասնակցել PARP-ին, որը Գործընկեր երկրներին առաջարկվում է ընտրովի սկզբունքով: PARP-ի շրջանակներում նախատեսվող նպատակների շուրջ բանակցություններ են վարվում յուրաքանչյուր երկրի հետ և խորացված դիտարկումների արդյունքում ամեն տարի գնահատվում է երկրի առաջընթացը:

### ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆՆ ԱՊԱՌԱՋՄԱԿԱՆԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԵՐԻՆ

ՆԱՏՕ-ի ԳհԽ Նպատակային հիմնադրամի ծրագրերն աջակցում են Գործընկեր երկրներին անվտանգ կերպով ոչնչացնելու ակններին, զինամթերքի և թեթև ու փոքր տրամաչափի զենքերի հավելյալ, կամ հնացած պաշարները: Առանձին Դաշնակից և Գործընկեր երկրների կողմից կանավորական սկզբունքով ֆինանսավորվող այս ծրագրերը սովորաբար ոլորտի այլ կազմակերպությունների հետ համագործակցություն են ներառում:



Ադրբեջանում 1,6 մլն եվրո է ներդրվել Մալոլուի նահիկին ռազմակայանում և Աղստաֆա ու Փոլյու քաղաքներում չպայթած զինամթերքի ոչնչացման և մաքրման ընթացիկ ծրագրում: Այս զինամթերքը տեղական բնակչության շրջանում մի քանի մահվան ու փաստվածքների պատճառ է դարձել:

Վրաստանում 1,1 մլն եվրո է տրամադրվել Պոնիչալա և Չալադի ռազմակայանների մոտ 500 երկիր-օղ և այլ տեսակի հրթիռների ոչնչացման ծրագրի համար: 2006թ. փետրվարին ավարտված այս ծրագիրը ոչ միայն վերացրեց անվտանգության սպառնալիքը, այլև կանխարգելեց ապագա պոտենցիալ բնապահպանական աղետը: Վրաստանում երկրորդ ծրագիրը սկսվել է 2007թ.-ին: 478 000 եվրո բյուջե ունեցող այդ ծրագիրը կնպաստի մոտ 9000 հրթիռների պաշարի ոչնչացմանը:



Վրացի փրկարարները մոտեցնում են տուժածներին փնտրելու համար նախատեսված սարքավորումները՝ 2007թ. մայիսին Խորվաթիայում կազմակերպված աղետների արձագանքելու վարժանքի ընթացքում:

**ՄԵՆԱՆԺԻ ՎԵՐԱՄՇԱԿՄԱՆ ԳՈՐԾԱՐԱՆ**

Վարչական պակտի երկրների կողմից նախկինում Լոզան գործվող մեղանժ տեսակի հրթիռային վառելիքը, որը վերին աստիճանի թունավոր և քայքայիչ նյութ է, ներկայումս Ադրբեջանի համար լուրջ առողջապահական և բնապահպանական սպառնալիք է: Ի պատասխան Ադրբեջանի կառավարության խնդրանքին ՆԱՏՕ-ի Գիտություն հանուն խաղաղության և անվտանգության ծրագիրը և ՆԱՏՕ-ի Տեխնիկական ապահովման և մատակարարման գործակալությունը (NAMSA), որպես ծրագրի իրականացնող, կառուցեցին շարժական վերամշակման գործարան՝ մեղանժ-ն անփասս համակցությունների վերածելու համար: Նախատեսվում էր մինչև 2007թ.-ի ավարտը վերամշակել 1700 տոննա մեղանժ:



Ադրբեջանում մեղանժի ժանգոտված տարողությունները սպառնալիք են շրջակա միջավայրի համար:

Մեկ այլ կարևոր գործիք է Պաշտպանական ինստիտուտների կառուցման Գործընկերության գործողությունների ծրագիրը (PAP-DIB): 2004թ. գործարկված PAP-DIB-ը աջակցում է Գործընկերության արդյունավետ և ժողովրդավարորեն պատասխանատու պաշտպանական ինստիտուտների ստեղծման գործում: Ծրագրի ընդհանուր նպատակներն են զինված ուժերի և պաշտպանական ու անվտանգության ոլորտի ինստիտուտների նկատմամբ արդյունավետ ժողովրդավարական և քաղաքացիական վերահսկողության հաստատումը, դրանք ավելի հաշվետու և թափանցիկ դարձնելը, ինչպես նաև դրանց համապատասխան քանակը, կառուցվածքը և ֆինանսավորումը ապահովելը՝ անվտանգության նոր իրավիճակի պահանջները բավարարելու համար:

Դաշինքի առաջնահերթություններից մեկն է նաև ՆԱՏՕ-ի Գիտ Նպատակային հիմնադրամի մեխանիզմների միջոցով աջակցելը Գործընկեր երկրների ապառազականացման ծրագրերին, որոնք ուղղված են հավելյալ և հնացած զենքերի ու զինամթերքի պաշարների առկայության արդյունքում ստեղծված խնդիրների լուծմանը: Այդ կարգի ծրագրեր գործարկվել են Ադրբեջանում և Վրաստանում (տես՝ 5-րդ էջի սյունակը):

**Աղետներին պատրաստ լինելը և արձագանքելը**

Բնական և մարդկային գործունեության արդյունքում առաջացած աղետները կարող են չափազանց ծանր հետևանքներ ունենալ նույնիսկ դրանց լավագույն կերպով պատրաստված երկրների համար: Այդպիսի աղետների հետևանքները հաճախ դուրս են գալիս պետական սահմաններից և, հետևաբար, կարող են վտանգել ամբողջ տարածաշրջանի անվտանգությունն ու կայունությունը: Ահա թե ինչու աղետներին պատրաստ լինելը և դրանց արձագանքելը (ՆԱՏՕ-ի շրջանակներում հաճախ կիրառվում է արտակարգ իրավիճակների պլանավորում արտահայտությունը) գործընկերության շրջանակներում իրականացվող գործողությունների կարևոր և բաղկացուցիչ մասն է կազմում:

Հայաստանը, Ադրբեջանը և Վրաստանը ՆԱՏՕ-ի հետ համատեղ աշխատում են բարելավել աղետներին պատրաստ լինելու և դրանց արձագանքելու իրենց ունակությունները: Այս ոլորտում գործունեության զգալի մասն իրականացվել է Աղետներին արձագանքելու եվրա-ատլանտյան համակարգման կենտրոնի (EADRCC) շրջանակներում:

EADRCC-ին ստեղծվել է 1998 թ.-ին՝ ԵԱԳԽ երկրների աղետների հաղթահարման ջանքերը համակարգելու նպատակով: Այն, օրինակ, օգնել է համակարգել աջակցությունը, որն աղետալի ջրհեղեղներից հետո տրամադրվել էր Ադրբեջանին և Վրաստանին համապատասխանաբար 2003 և 2005 թթ. և անտառային հրդեհներից հետո Վրաստանին՝ 2006թ.

Վարժանքներն արժեքավոր հնարավորություն են տալիս գնահատել գործելու ունակությունները և բացահայտել ապագայում ավելի լայն համագործակցության ոլորտները: Հարավկովկասյան Գործընկեր երկրներն այդպիսի վարժանքների մասնակցում են 2000թ.-ից: Վերջին տարիներին EADRCC-ի գործունեության մեծ մասը, ներառյալ մի շարք վարժանքներ, նախագծվել, կազմակերպվել և իրականացվել են Գործընկեր երկրներում: Սա արտացոլում է Գործընկեր երկրների կողմից արտակարգ իրավիճակների պլանավորման ոլորտում համագործակցությանը հատկացվող մեծ կարևորությունը, ինչը Գիտ գործունեության շրջանակներում ամենախոշոր ոչ ռազմական բաղադրիչն է:



## Գիտություն և բնապահպանություն

Հարավկովկասյան երկրների գիտնականները և հետազոտողներն օգտվում են ՆԱՏՕ-ի Գիտություն հանուն խաղաղության և անվտանգության (SPS) ծրագրի առաջարկած հնարավորություններից, որը խթանում է համագործակցությունը ՆԱՏՕ-ի անդամ և Գործընկեր երկրների գիտնականների միջև, նպաստում է փոխադարձ կապերի և ունակությունների ամրապնդմանը: Աջակցություն ստացող միջազգային մասնագետների շարքում են անվտանգությանը վերաբերող գիտական խնդիրների և բնապահպանական հարցերի վերաբերյալ հետազոտությունները, սեմինարները, աշխատանքային քննարկումները և համատեղ ուսումնասիրությունները:

Գիտնականների շրջանում համագործակցությունը ավանդական բնույթ ունի և այն անհրաժեշտ նախապայման է գիտական առաջընթացի համար: Ստեղծված ցանցերը նաև իրականացնում են տարբեր մշակույթներ և ավանդույթներ ներկայացնող համայնքների միջև փոխըմբռնում ու վստահություն կառուցելու քաղաքական նպատակը: Մեկ այլ նպատակ է տեխնոլոգիաների տրամադրումն ու փոխանցումը խթանելը, որը Գործընկեր երկրներին կօգնի լուծել իրենց առանձնահատուկ առաջնահերթ խնդիրները:

Բացի հատուկ ոլորտներում ուսումնասիրությունների ծրագրերից SPS ծրագրի նպատակն է նաև հզորացնել հարավկովկասյան երկրների գիտական շրջանակները: Վիրտուալ Մետաքսե Ճանապարհ ծրագրի նպատակն է արբանյակային ցանցի միջոցով բարելավել ինտերնետային կապը Կովկասի և Կենտրոնական Ասիայի հետազոտական կենտրոնների համար: Ցանցային ենթակառուցվածքների դրամաշնորհներն աջակցում են Գործընկեր երկրների հետազոտական ինստիտուտներին, տրամադրելով սարքավորումներ, որոնք կբարելավեն նրանց հեռահաղորդակցման միջոցների անվտանգության մակարդակն ու որակը:

## Հանրային տեղեկատվություն

Հայաստանի, Ադրբեջանի և Վրաստանի հետ համագործակցության մյուս կարևոր ոլորտը հանրային տեղեկատվությունն է: Դաշինքի և ՆԱՏՕ-ի հետ համագործակցության օգուտների վերաբերյալ հանրային իրազեկությունը բարձրացնելու, ինչպես նաև ավելի լայն եվրա-ատլանտյան անվտանգության խնդիրների վերաբերյալ երկխոսությունում քաղաքացիական հասարակությունը ներգրավելու նպատակով ընթանում են աշխատանքներ, որոնք ուղղված են համալսարանների, հասարակական կազմակերպությունների և մամուլի ու լրատվամիջոցների հետ ընդհանուր ցանցի ստեղծմանը: ՆԱՏՕ-ի աջակցությամբ և պետական իշխանությունների հետ համատեղ տեղական հասարակական կազմակերպությունները կազմակերպել են բազմաթիվ միջոցառումներ՝ սեմինարներ, համաժողովներ, աշխատանքային քննարկումներ և հրատարակումներ:

Բոլոր երեք երկրներից պարբերաբար կարծիք ձևավորողների խմբեր են հրավիրվում ՆԱՏՕ-ի կենտրոնակայան և SHAPE՝ Դաշինքի վերաբերյալ բրիֆինգներին մասնակցելու նպատակով: ՆԱՏՕ-ի պաշտոնյաները հաճախ իրենք են մեկնում տարածաշրջան՝ հասարակական միջոցառումների ընթացքում ելույթներ ունենալու համար: ՆԱՏՕ-ի Հանրային դիվանագիտության բաժինն աջակցել է նաև ՆԱՏՕ-ի տեղեկատվական կենտրոնների ստեղծմանը բոլոր երեք երկրներում, որոնք ծառայում են որպես համապատասխան հրատարակումների և փաստաթղթերի տարածման տեղական կենտրոններ:

## ԳԵՏԵՐԻ ՄՈՆԻՏՈՐԻՆԳԸ ՀԱՐԱՎԱՅԻՆ ԿՈՎԿԱՍՈՒՄ

ՆԱՏՕ-ն և Եվրոպայում անվտանգության և համագործակցության կազմակերպությունը (ԵԱՀԿ) համատեղ աջակցում են Հարավային Կովկասում գետերի մոնիտորինգի ծրագրին, որը ֆինանսավորվում է ՆԱՏՕ-ի Գիտություն հանուն խաղաղության և անվտանգության ծրագրի շրջանակներում: 2004թ.-ին գործարկված և 2008թ.-ի վերջին ավարտվող այս նախաձեռնության նպատակն է նվազեցնել ընդհանուր ջրային պաշարների հետ կապված վեճերի հավանական պատճառները:

Հայաստանը, Ադրբեջանն ու Վրաստանը համատեղ օգտագործում են Քուռ և Արաքս գետերը և դրանց ջրբաժանները: Ինչպես հաճախ է պատահում սահմանները հատող գետերի հետ, այդ երկրներն ունեն ընդհանուր խնդիրներ, որոնք կապված են գյուղատնտեսական և արդյունաբերական գործունեության արդյունքում ջրամատակարարման և գետերի աղտոտվածության հետ: Ծրագրի նպատակն է բոլոր երեք երկրներում հիմնադրել ժամանակակից սարքավորումներով, բարձր պատրաստվածություն ունեցող անձնակազմով և ստանդարտացված աշխատանքային ընթացակարգերով հազեցած ջրերի մոնիտորինգի լաբորատորիաներ:

Ծրագիրն ապահովում է նաև ջրերի ոռոգիտակտիվության մոնիտորինգ, բացահայտելու համար ցանկացած ոռոգիտակտիվ իզոտոպ, որը կարող է ջրի մեջ հայտնվել պատահաբար, կամ կանխամտածված կերպով՝ որպես ահաբեկչական ակտ:

Յուրաքանչյուր Գործընկեր երկրի հետ ՆԱՏՕ-ի հետ հարաբերությունների վերաբերյալ ինտերնետային կայքեր:

Հայաստան:  
[www.nato.int/issues/nato-armenia](http://www.nato.int/issues/nato-armenia)

Ադրբեջան:  
[www.nato.int/issues/nato-azerbaijan](http://www.nato.int/issues/nato-azerbaijan)

Վրաստան:  
[www.nato.int/issues/nato-georgia](http://www.nato.int/issues/nato-georgia)

ՆԱՏՕ-ի հրատարակությունները կարող են ձեռք բերվել [www.nato.int/ebookshop](http://www.nato.int/ebookshop) էլ-գրախանութից:

## Փուլանշեր

- 1991թ.** Հայաստանը, Ադրբեջանն ու Վրաստանը հայտարարեցին իրենց անկախությունը Խորհրդային Միությունից:
- 1992թ.** Հայաստանը, Ադրբեջանն ու Վրաստանը միացան Հյուսիս-Ատլանտյան Համագործակցության Խորհրդին:
- 1994թ.** Հայաստանը, Ադրբեջանն ու Վրաստանը ստորագրեցին Գործընկերություն հանուն Խաղաղության (ԳհԽ) շրջանակային փաստաթուղթը:
- 1996թ.** Վրաստանը սկսեց մասնակցել ԳհԽ-ի Պլանավորման և դիտարկման գործընթացին:
- 1997թ.** Ադրբեջանը սկսեց մասնակցել ԳհԽ-ի Պլանավորման և դիտարկման գործընթացին:
- 1999թ.** Ադրբեջանն ու Վրաստանը ուժեր տրամադրեցին Կոսովոյի ուժերին (KFOR):
- 2001թ.** Վրաստանն առաջին անգամ հյուրընկալեց ՆԱՏՕ/ԳհԽ Համագործակցող գործընկեր 2001՝ վարժանքը:
- 2002թ.** Վրաստանը հյուրընկալեց ՆԱՏՕ/ԳհԽ՝ Լավագույն համատեղ ջանք 2002՝ վարժանքը:  
Հայաստանն ու Վրաստանը միացան Վիրտուալ Մետաքսե Ճանապարհ ծրագրին:  
Հայաստանը սկսեց մասնակցել ԳհԽ-ի Պլանավորման և դիտարկման գործընթացին:  
Ադրբեջանը գործեր տրամադրեց Աֆղանստանում Միջազգային անվտանգության աջակցության ուժերին (ISAF):
- 2003թ.** Հայաստանն առաջին անգամ հյուրընկալեց ՆԱՏՕ/ԳհԽ՝ Լավագույն համատեղ ջանք 2003՝ վարժանքը:  
Ադրբեջանը միացավ Վիրտուալ Մետաքսե Ճանապարհին:
- 2004թ.** ՆԱՏՕ-ի Ստամբուլյան գագաթնաժողովը հատուկ կարևորություն տվեց Կովկասին և Կենտրոնական Ասիային:  
Վրաստանն ավարտին հասցրեց իր առաջին Անհատական գործընկերության գործողությունների ծրագիրը (ԱԳԳԾ):  
Հայաստանն ուժեր է տրամադրեց KFOR-ին:  
Վրաստանը զինվորներ տրամադրեց ISAF-ին՝ նախագահական ընտրությունների ընթացքում անվտանգությունն ապահովելու նպատակով:
- 2005թ.** Վրաստանն ու ՆԱՏՕ-ն պայմանագիր ստորագրեցին, որով թույլատրվեց Վրաստանով տարանցել ISAF-ի բեռներն ու անձնակազմը:  
Վրաստանը ՆԱՏՕ-ի Հասարակական դիվանագիտության բաժնի աջակցությամբ բացեց ՆԱՏՕ-ի տեղեկատվական կենտրոն:  
Հայաստանն ու Ադրբեջանն ավարտին հասցրեցին իրենց առաջին ԱԳԳԾ-ներն:
- 2006թ.** Հայաստանն ու Ադրբեջանը ՆԱՏՕ-ի Հասարակական դիվանագիտության բաժնի աջակցությամբ բացեցին ՆԱՏՕ-ի տեղեկատվական կենտրոններ:  
ՆԱՏՕ-ն Վրաստանին առաջարկեց Ինտենսիվ երկխոսություն:
- 2007թ.** Վրաստանը հյուրընկալեց ՆԱՏՕ/ԳհԽ Համատեղ նետաձիգ 2007՝ ռազմա-օդային վարժանքը: